ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Սյունիքի մարզ, 3301, ք.Կապան, Գ.Նժդեհի 1, Հեռ.՝ +374 60 517822, +374 285 44291, Էլ.փոստ՝ syunik@mta.gov.am

« » 2018թ., №

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ղեկավար պարոն Ա. Առուշանյանին

Հարգելի պարոն Առուշանյան

Համաձայն ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի Ձեզ ենք ներկայացնում ՀՀ վարչապետի 13.08.2001թ. N 599 որոշմամբ ստեղծված «Հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի» 09.01.2018թ. N 8 **դրական** եզրակացությունը՝ ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ բնակավայրում հողամասի նպատակային նշանակությունը փոխելու նպատակով կազմված հողաշինարարական գործի վերաբերյալ, որով նախատեսվում է հասարակական սպասարկման համալիրի շինարարության համար համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողերից բնակավայրերի հասարակական կառուցապատման հողերի շարքը փոխադրել 2.1234 հեկտար հողամաս:

Առաջարկում ենք Ձեզ կազմել և ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետին համապատասխան 5 աշխատանքային օրվա ընթացքում Գորիս համայնքի ավագանու հաստատմանն ներկայացնել «Հողերի նպատակային նշանակությունը փոխելու մասին» որոշման նախագիծ (հողաշինարարական գործի գծագրական մասի հավելվածի հետ միասին):

Միաժամանակ, առաջարկում ենք հողամասի կառուցապատման ենթակա (կառույցներով զբաղեցվող) մասերը նպատակային նշանակությամբ ուղղակի վաճառքի կարգով օտարելուց հետո գազալցակայանի կառուցման նպատակով շինթույլտվությունը տրամադրել մյուս հասարակական սպասարկման օբյեկտների կառուցման նպատակով տրվող շինթույլտվությունների հետ միաժամանակ, իսկ շահագործման թույլտվությունը տրամադրել միայն հասարակական սպասարկման օբյեկտների կառուցումից և շահագործումից հետո, ինչպես նաև հասարակական սպասարկման համալիրի կառուցապատման նախագծի ճարտարապետահատակագծային առաջադրանքի տրամադրման գործառույթները իրականացնել ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2404-Ն որոշման 8-րդ կետով սահմանված պահանջին համապատասխան:

Առդիր՝ 2 թերթ:

Հարգանքով՝ **Վ. Հակոբյան**

Կատարող՝ Մ. Կոստանդյան
Հեռ.՝ (0285) 44273
Էլ. փոստ՝ syunik.hoghshin@mta.gov.am